

պատ հենի»: Դրանից դէսն է, որ ցորենի հացը պատճեն համարում:

X. Չար ոգիներ. — Սասանայ

Համշէնցի հայը խոր համոզուած է, որ բնութեան մէջ չար ոգիներ կան, որ Արարչից անկախ և Նրան հակառակ՝ գոյութիւն ունի մի չար զօրութիւն, որ ամեն կերպ աշխատում է խել մարդկային ազգը Աստուծո ձեռքից, նրան փորձանքի մէջ գցել, մատնելով նրան յաւիտեանական տանջանքին: Մարդկանց տանջանքը նրա միակ նպատակն ու ուրախութիւնն է: Նոյն իսկ թէև լսել է, որ մարդկանց հասած բոլոր աղէտները մեր «մեղքերի» համար են գալիս Աստուծոց, բայց երբեմն էլ դրանց ուղղակի վերագրում է աւելի բնութեան մէջ եղած չար ոգուն, սատանի գօրութեան, քան բարի Արարչին: Որին դիմում է միայն չարի ներդործութիւնը մեղմացնելու և զգացնելու համար: Ճիշտ է՝ նա Արարչին չարից աւելի մեծ է համարում, բայց նրան չարն աւելի է վնասում, նա այդ չարից, սատանայից աւելի է վախում, քան իր Արարչից: Աստուած թէ որ միւս կեանքում պիտի պատժէ նրան, սատանան ուղղակի այստեղ է փորձանք բերում նրա գլխին, նրան նեղութեան մէջ գցում:

Բոլոր չար գօրութիւնների աղբիւրը նա համարում է սատանին, որ երբեմն իբրև «փէրի» ու «ջին» — խաբում է ջահէլ պատանիներին ու երիտասարդներին, իբրև «ջատու պառաւ» — խեղդում է օրօրոցի երեխաներին, իբրև «ալ» — գալիս նստում է քնած մարդկանց վրայ, աշխատելով խեղդել նրանց, իբրև «խորթլաղ» («գոռնադաբ») — մեղաւոր մեռելներին անգամ հանգիստ չի թողնում գերեզմաններում, վեր հանում, ման է բերում նրանց գիշերներով:

Ով էլ լինի, կին թէ տղամարդ, տանը թէ դուրսը, ճանապարհին, թէ ջրի մօտ, հիւանդ թէ առողջ, — բոլորը ենթակա են նրա փորձութեան: Ինչ տեսակ վատ ու չար բան որ լինում է, բոլորը նրա ուզելովն է, ինչ ցաւ, ինչ փորձանք,

ինչ անյաջողութիւն, որ գալիս է մարդու գլխին, բոլորը նը-
լաւնից է: Եւ այդ ահեղ թշնամու դէմ, այդ անհաւասար կռուով՝
Աստուած մարդուն իրրեւ զօրաւիգ ու օգնական իր հրեշտակ-
ներին է զրկում, որոնք սակայն մինչև այսօր կայծակի հրե-
դէն հարուածներով ոչինչ չեն կարողացել անել նրան. չարը
առաջուան պէս տիրում է աշխարհքում: Ամեն անգամ, երբ
սատանան Հետամուտ է լինում Տիրոջ ստեղծուածին, հրեշտակը
Հասնում է նրան, աշխատելով ազատել նրան փորձիչի ձեռքից:
Թէ որ ազատում է, ուրախ-ուրախ թուջում, Հեռանում է
նրանից, սատանին սեւեռեւ թողնում, իսկ երբ չի կարողանում,
լաց է լինում նրա համար:

Սատանան ցերեկով ձորերի ու փոսերի մէջ է մնում, դի-
շերը դուրս է գալիս բաց տեղը և կամ ջրերի ափը: Դրա հա-
մար է որ գիշերով առհասարակ լաւ չեն համարում ջուրը
զնալը, կարող է չարին ռաստ գալ: Նրա ձեռքն ընկնողը Հեշտ
չի աղատուիլ, կը բռնեն սկզբում մի քիչ հետները կընկնեն,
կը գուարճանան, բայց վերջը կը չարչարեն ու հոգին կը հա-
նեն, թէ որ բռնուողը ինքն իրան մոռանայ, Տիրոջ անունը
չը տայ և կամ երեսին խաչ չը հանէ:

Սատանան էլ իր գիր-կարդումն ունի, նա էլ «աւետարան»
ունի, բայց մերի նման չէ: Հիւանդի վրայ «կաշտում» արած
ժամանակ նա էլ է կարդում: Կարդացողը պէտք է ջրի պէս
շուտ-շուտ կարդայ, թէ չէ սատանան առաջ կանցնի, իր
«կաշտումը» կըսողացնի, մերը կը կտրի:

Առաւօտը վերկենալուն պէս՝ պէտք է աչքերը լուանալ,
որ սատանան աչքը չը մտնէ:

Իրիկունները տունը աւելուց յետոյ, «կախը» («տէգը»,
աղեղը), ինչպէս և «օղուցք» ջուրը պէտք է պահել մինչև
միւս առաւօտ, գիշերով շուրս չըթափել, թէ չէ կարող է սա-
տանի վրայ թափուել, նա կը բարկանայ և մարդուն «չարթ-
միշ» կանէ (կը խփի):

Նոր պսակուած տղին գիշերը, մթնով դուրս չեն զրկիլ,
որ չը լինի, թէ չարը խփի և կամ ջրները բռնեն:

Գիշերով թէ որ ասեղ ընկնի ձեռքից, գետին չի ընկնիլ. սատանան կը բռնի:

Արակին որ փչես ու չը վառի, պատճառը էլի սատանան է, նա է որ չի թողնում կրակին վառուի: Թէ որ փչելիս հետը մի վատ խօսք, մի «քուֆր» անեն, սատանի քէֆը կը գայ. այն ժամանակ կը թողնի:

Մի տեսակ թիթեռ կայ, որին «սատանի թիթեռ» են ասում. նրան էլ սատանան է խաբում. զրկում է, թէ կրակ տանի, բայց այրում է կրակից:

Գիշերը, մթնով ծառերի վրայ երբ մի լոյս են տեսնում, ասում են՝ «սատանի կրակ» է, փէրիններն են վառել:

Հաց ուտելիս՝ թէ գտալը ձեռքիցն ընկնի, ասել է՝ սատանան խփեց ձեռքին:

Հացի թափած փշուրքը գետնից վերցնելիս, թէ որ փր-չենք ուտենք, սատանան կը պատռի, թէ չը փչենք՝ ուրախ կը լինի:

Հաց ուտելը վերջացնելուն պէս՝ սեղանը պէտք է իսկոյն վերցնել, թէ չէ հրեշտակը լաց կը լինի, սատանան կուրախանայ:

Իրիկնահացն անելուց յետոյ ամանները պէտք է անպատճառ նոյն գիշերը լուանալ, թէ չէ՝ «ջիները» կը դան գիշերը և թքով կը լուան, իրանց համար կերակուր կեփեն, կեղտոտ վեր կը զգեն, կը գնան:

Երբ մի բան կորչում է և չեն գտնում, ասում են, թէ սատանան վրան նստած է: Դրա համար ձեռքի ափին թըք-նում են ու ասում. «Սատոնայ, պոչդ ճղլեմ կու. ետ դնա բօնի վրայըն»: Միւս ձեռքն էլ բերում դնում են թքի վրայ խաչաձև. և չորս կողմը դնելով՝ ասում են. «Բատին ես տէ, քնտին ես տէ» (այս կողմն ես. թէ այն կողմն ես). յետոյ մէկ անգամից խփում են. թուքը որ կողմը որ գնում է՝ կորուստն էլ այն կողմը կը լինի:

Ջուրի մասին այս բաներն են պատմում:

Ջաղուն սովորաբար կինմարդ է լինում. աւելի պառաւան-բից, բայց պատահում է երբեմն և տղամարդ-ջաղու: Կինը

միշտ փոքր երեխաներին է խեղդում, իսկ տղամարդը՝ միայն հորթերը: Ջաղու լինում են սովորական, մեր տեսած պառաւններն ու տղամարդիկը, որոնք անբւկոյթ չար զօրութիւնով դառնում են ջաղու: Որ հարցնէք՝ մէկ-մէկ շատ պատմութիւններ կանեն, թէ ինչպէս գիշերով ջաղուին բռնել, նեղն են գցել, թէ ինչպէս յանկարծ զարմացել են, երբ տեսել են, որ ջաղու ասածը իրանց գրկեցը կամ ծանօթն է եղել, որից ոչինչ կասկած չեն ունեցել և այլն:

Ջաղուն սովորաբար գիշերն է ման գալիս: Նրա համար ասում են, որ մաղի միջից հաց չի ուտիլ, և մի ճախարակ ունի, վրան որ հեծնի՝ մի գիշերում մինչի Հնդկաստան կերթայ կը գալ: Երեխանց խեղդելու համար ջաղուն եօթը գերեզմանից հող է վերցնում և իր ուզած տան վրայ լցնում, որ տնհոց վրայ խորը քուն բերէ և երեխին խեղդի, նրա «ջիղէրը» դողնայ, տանի ուտէ: Եթէ ուրիշի երեխայ չը գտնէ, իրանը պիտի խեղդէ:

Ջատուից ազատուելու համար տան երթիկի տակը մի աման ջուր են դնում, որ ջաղուն երբ գալ, ջուրը նրա աչքին ծով երևալ, յետ դառնալ: Եկած ժամանակն էլ՝ երբ տնեցիներին մէկը նրան տեսնի, չպէտք է բարձրաձայն լմաց տալ ամէնքին, թէ չէ ջաղուն իսկոյն կը չքանայ: Պէտք է մի ասեղ վերցնել և ծածուկ գլխի շուրջը երեք անգամ պտտեցնել և յետևի կողմից գետինը խրել: Դրանից յետոյ էլ չի կարող գալ: Ջաղուին կարելի է բռնել՝ եթէ որ տանը մատաղ արած լինին և մորթին պատին կախ լինի և տեսնողը մորթու տակը պահուի: Բռնելուց յետոյ տաք-տաք «ակիշով» պէտք է նրա ձեռքի ափը դադել, որ ջաղութիւնը թող տալ, մոռանալ:

Այլ մի անեքուկոյթ ոգի է, որ երբեմն գիշերները գալիս նստում է քնած մարդկանց վրայ, վրաներն այնպէս ծանրանում, որ մարդը տակը չի կարողանում շարժուել: Դրան ալնիստ են ասում: Դրանից ազատուելու համար պէտք է բուժ մատը շարժել, պառկած տեղը գլխի տակն էլ «կիպրիանոս» դնել:

«Խորլէաղ»՝ Մեռածը երբեմն գերեզմանից դուրս է գալիս, շրջում, երևում մարդկանց մէջ. դրան են ասում «խորթլաղ»:

«Խորթլաղը» սովորաբար թուրք մեռելներից է լինում: Նա մարդկանց աչքին երեք տեսակ է երևում, մարդու, շան կամ կատուի ձևով, ամենից աւելի վնասողը մարդակերպ երևցողն է: Մեռելը հրեման երևում է միայն սպիտակ պատանքը հագին: Նա գիշերով գալիս է, դռները խիթիկացնում, սրտառուջ ձայնով կանչում, աղաչում, տնեցոց սարափեցնում:

Մի գիշեր մի ճանպորդ թուրք ղերեզմանատան մօտով անցնելիս՝ երկու սիրուն շնիկ է տեսնում. վերցնում է նրանց, ձիու գաւակը դնում և Հետը տուն տանում: Գիշերը շնիկները դոմն է պահում: Մէկ էլ տեսնես՝ կէս գիշերին շնիկները ունոց են դնում, դռները ճանկուտում: Գնում է՝ թէ դուռը բանայ, քացի է տալիս՝ չի բացւում: Առաւօտը դնում տեսնում է, որ դոմում երկու ահագին մեռել ընկած են անշուէ: Մարդը խելքի է ընկնում, որ սրանք իր բերած շներն են, ոտլպուած տանում, նորից թաղում է նրանց:

«Խորթլաղը» երբ վնաս է տալիս, կարելի է ազատուել նրանից՝ մորթելով նրան երկաթի կոթ ունեցող դասակով, մակուկի թիով և կամ մանգաղով:

Ասում են՝ թէ որ թուրքը իր կեանքում գտնէ մէկ անգամ Հայ տէրտէրի օրհնած Հաց կերած լինի, «խորթլաղ» չի դառնալ:

Ահա և մի երկու աւանդութիւն սատանի մասին:

Մէկ անգամ սատանան ասում է Հրեշտակին. «Արի իրար Հեռ կուռնք»: Հրեշտակը Համաձայնում է: Սատանան վերցընում է մի մեծ, երկայն ձող, իսկ Հրեշտակը մի սլտլիկ փայտ: Մտնում են փուռը: Սատանի փայտը շատ երկայն էր, չի հաւքում փուռը. Հրեշտակը իր կարճ փայտովը խփում է խփում սատանին, թալցնում, թողնում: Մի քանի օրից յետոյ սատանան պատահում է Հրեշտակին և էլի առաջարկում կուռել, բայց այս անգամ բաց տեղում: Հրեշտակն էլի Համաձայնում է: Սատանան այս անգամ վերցնում է մի փոքրիկ փայտ, իսկ Հրեշտակը մի մեծ, երկայն «ջոփ» (փայտ) է գտնում. սկսում են կուռել: Հրեշտակի փայտը երկայն էր, սատանին մօտենա-

յու չի թողնում. խիում, խփում, ջարդ ու խուրդ է անում, սատանի հոգին հանում:

Մէկ անգամ էլ աղամորդին ու սատանան պայման են կապում, որ իրար հետ «օրթըքղութիւն» (կիրարութիւն) անեն: Սոխ ու սխտոր են ցանում: Վանաչը դուրս գալուն պէս՝ մարդ հարցնում է սատանին. «Երեսի՞նք կառնես թէ հողի տակինք»: Սատանան երեսին է ուզում: Ժամանակը դալիս հասնում է. սատանան իր փայլը քաղում, տանում լցնում է մի տեղ. մի երկու օրում փթեցնում, իսկ մարդն ուրախ-ուրախ հաւաքում է հողի տակի զլխները, տանում, ծախում, փող շինում:

Մէկէլ տարին սատանան նորից պայման է կապում աղամորդու հետ: Այս անգամ էլ ցորեն են ցանում: Առաջուան պէս՝ հէնց որ կանաչում է արտը, աղամորդին հարցնում է սատանին՝ «որը պիտի առնէ. երեսինք, թէ հողի տակինք»։ «Հօ ամեն ժամանակ չես կարող խաբել, ասում է սատանան, այս անգամ տակինք ես պիտի առնեմ»: Աղամորդին բոլ-բոլ ցորենը քաղում տանում է, իսկ սատանան փորում-փորփրում է հողը, տակը բան չի զտնում:

XI. Կ ա խ ա ր դ ու թ ի ն ը:

Համշէնցի Ժողովուրդը ինչպէս որ անխախտ հաւատ ունի դէպի բնութեան չար զօրութեան գոլութիւնը, նոյնպէս էլ ընդունում է, որ չարը խափանելու համար կան յատուկ դեղեր ու միջոցներ, որոնց գաղտնիքն ու ազդեցութիւնը վերադրում է երբեմն չար, երբեմն էլ բարի զօրութեան, սատանի ու սրբերի կողմից մարդկանց տրուած շնորհքին: Վախարդութիւնը արհեստ շինած, միմիայն նրանով ապրող մարդիկ բոլորովին չկան նրանց մօտ: Զատ քիչ կը պատահին նրանց մէջ այնպիսիներ, որոնք երկրագործութեան հետ՝ երբեմն պարապ ժամերը այդ տեսակ բաներին նուիրէին: Այդ էլ շատ անգամ այնքան փողի համար չեն անում, ինչքան վարձքի կամ հէնց այնպէս հարկանութեան համար: Վախարդական բաների համար աւելի